ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

| Միջոցառման անվանումը | Կատարված աշխատանքը | ժամանակահատված | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|
| Հանրակրթական և նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների շրջանում օրի-նապահ և ազգասեր քաղաքացու կերպարի դաստիարակության աշխատանքներում իրավապահ մարմինների փորձառու ծառայողների ու վետերանների ներգրավում | Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների իրավագիտակցության բարձրացման , քաղաքացիական պարտքի գիտակցության, պոզիտիվ դիրքորոշման ձևավորման, օրինապահ քաղաքացու կերպարի ձևավորման նպատակով կազմակերպվել են տարբեր միջոցառումներ՝ բանավեճեր, դասարանների և դպրոցների միջև մրցույթներ, դասախոսություններ, շարադրությունների մրցույթներ, հանդիպումներ և այլն:<br>Օրինապահ , հայրենասեր քաղաքացու կերպարի ձևավորման, ինչպես նաև իրավապահ մարմինների ծառայողական գործունեության նկատմամբ հարգանքի ձևավորման նպատակով դպրոցներում հաճախակի կազմակերպվել են հանդիպումներ իրավապահ մարմինների աշխատակիցների և ՀԿ-ների ներկայացուցիչների հետ: Իրավապահ մարմինների աշխատանքը լավ | 2008-2012թ.թ | Ֆինանսավորում չի պահանջվել |

| | | | |
|---|---|---|---|
| | պատկերացնելու նպատակով կազմակերպվել են աշակերտների այցելություններ դատարաններ, այլ իրավապահ մարմիններ: Մարզպետարանի և իրավապահ մարմինների աշխատակիցները պարբերաբար հանդիպումներ են ունեցել մարզի բնակիչների, մասնավորապես դպրոցների աշակերտների հետ: Իրականացվել է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը: | | |
| Տեղերում գործող երիտասարդական միջոցառումների կենտրոնների, ուսանողական խորհուրդների, երիտասարդական ու սպորտային տարբեր հասարակական կազմակերպությունների գործունեության խթանում | Մարզի տարածքում գործում են 7 երիտասարդական հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Արարատի մասնաճյուղը, որն էլ անմիջական կապ է ստեղծում մարզի երիտասարդության և հասարակական կազմակերպությունների միջև: Մարզային իշխանությունները մշտապես աջակցում են երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեությանը: ՀՀ սփյուռքի | 2008-2012թ.թ | համապատասխան հանրապետական գործադիր մարմինների բյուջեներ համայնքային բյուջեներ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ |

| | | | |
|---|---|---|---|
| | նախարարության <<Արի տուն>> ծրագրի և <<Իմ Հայաստան>> փառատոնի շրջանակներում մարզում հյուրընկալվել են սփյուռքահայ պատանիներ, ծանոթացել են մարզի պատմա-մշակութային հուշարձաններին, նրանց համար մարզի երիտասարդների հետ համատեղ կազմակերպվել են ժամանցային և ճանաչողական ծրագրեր: | | |
| երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպում | Մարզի երիտասարդության համար պարբերաբար կազմակերպվել են օտար լեզվի և համակարգչային դասընթացներ, սեմինարներ, հոգևոր-մշակութային, սպորտային, կրթադաստիարակչական, տեղեկատվական, ճանաչողական, ռազմա-հայրենասիրական, ուսուցողական ուղղվածության, ժամանցային ծրագրեր, թրեյնինգներ, հանդիպումներ գործատուների հետ:Երիտասարդները ներգրավվել և ակտիվ մասնակցություն են ցուցաբերել մարզային մշակութային և սպորտային միջոցառումներում: | 2008-2012թ.թ | համայնքային բյուջեներ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ |